ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության Կառավարության և Ռուսաստանի Դաշնության Կառավարության միջև «ՀայՌուսգազարդ» փակ բաժնետիրական ընկերության բաժնետոմսերի առուվաճառքի և հետագա գործունեության պայմանների մասին 2013 թվականի դեկտեմբերի 2-ի համաձայնագրում փոփոխություններ կատարելու մասին

Հայաստանի Հանրապետության Կառավարությունը և Ռուսաստանի Դաշնության Կառավարությունը, այսուհետև՝ Կողմեր,

հիմնվելով Հայաստանի Հանրապետության Կառավարության և Ռուսաստանի Դաշնության Կառավարության միջև «ՀայՌուսգազարդ» փակ բաժնետիրական ընկերության բաժնետոմսերի առուվաճառքի և հետագա գործունեության պայմանների մասին 2013 թվականի դեկտեմբերի 2-ի համաձայնագրի (այսուհետև՝ Համաձայնագիր) 11-րդ հոդվածի դրույթների վրա,

ընդունելով Հայաստանի Հանրապետության տնտեսության համար համակարգաստեղծ ձեռնարկության՝ «Գազպրոմ Արմենիա» փակ բաժնետիրական ընկերության (նախկինում՝ «ՀայՌուսգազարդ» փակ բաժնետիրական ընկերություն) (Հայաստանի Հանրապետություն) կայուն տնտեսական վիճակի ապահովման կարևորությունը,

հաշվի առնելով Համաձայնագրում փոփոխություններ կատարելու մասին 2015թ. սեպտեմբերի 7-ին, 2016թ. մարտի 10-ին, 2016թ. ապրիլի 7-ին և 2016թ. դեկտեմբերի 30-ին ստորագրված արձանագրությունները,

համաձայնեցին հետևյալի մասին.

Հոդված 1

1. Համաձայնագրի Հավելվածում 4-րդ կետի 1-ին ենթակետում «2017թ. նոյեմբերի 1-ը» բառերը փոխարինել «2018թ. նոյեմբերի 1-ը» բառերով:

2. Համաձայնագրի Հավելվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ 9-րդ կետով.

«9. «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի կողմից 2018 թվականի ընթացքում սպառողներին իրացվող բնական գազի սակագները պահպանվում են 2017թ. հունվարի 1-ից Հայաստանի Հանրապետության տարածքում գործող սակագների մակարդակի վրա:»:

Հոդված 2

Սույն Արձանագրությունն ուժի մեջ է մտնում Կողմերի կողմից դրա ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ ներպետական ընթացակարգերի կատարման մասին վերջին գրավոր ծանուցումը դիվանագիտական ուղիներով ստանալու ամսաթվից:

Կատարված է Մոսկվա քաղաքում 2018թ. օգոստոսի 2-ին երկու բնօրինակով, յուրաքանչյուրը՝ հայերեն և ռուսերեն, ընդ որում, երկու տեքստերն էլ հավասարազոր են:

Հայաստանի Հանրապետության Կառավարության կողմից՝

Ռուսաստանի Դաշնության Կառավարության կողմից՝

Սույնով հավաստվում է, որ կցված տեքստը 2018թ. օգոստոսի 2-ին ստորագրված «Հայաստանի Հանրապետության Կառավարության և Ռուսաստանի Դաշնության Կառավարության միջև ««ՀայՌուսգազարդ» փակ բաժնետիրական ընկերության բաժնետոմսերի առուվաճառքի և հետագա գործունեության պայմանների մասին 2013 թվականի դեկտեմբերի 2-ի՝ Համաձայնագրում փոփոխություններ կատարելու մասին» արձանագրության՝ Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարության միջազգային պայմանագրերի պահոցում (դեպոզիտում) պահվող հայերեն բնօրինակի նույնական պատճենն է:

Հայաստանի Հանրապետության
արտաքին գործերի նախարարության
միջազգային պայմանագրերի և
իրավունքի վարչության պետ՝

Սաթենիկ Աբգարյան